

ПОЛИТИКА

Երեք սկզբունք, վեց տարր և հինգ նախապայման. Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հեռանկարը «ադրբեջանական խաղաղության» հաստատման համատեքստում¹

Փաշայան Հրայր Ա.

Արցախի պետական համալսարանի և Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս,
բ. գ. թ., դոցենտ (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն)
hrayr.pashayan@mail.ru

ՀՏԳ՝ 327; EDN: LCBKUH

Հանգուցաբառեր` Ղարաբաղյան հակամարտություն, միջազգային հանրություն, ԵԱՀԿ Մինսկի խումբ, երեք սկզբունք, վեց տարր, հինգ նախապայման, Բարժի խաղաղության օրակարգ, Ադրբեջան, Հայաստան, Արցախ:

Три принципа, шесть элементов и пять предпосылок: Перспектива урегулирования карабахской проблемы в контексте установления «азербайджанского мира»

Пашаян Грайр А.

Преподаватель Арцахского государственного университета и Университета Месропа Маштоца, кандидат политических наук, доцент (Степанакерт, Республика Арцах)
hrayr.pashayan@mail.ru

Аннотация. В статье анализируются перспективы, вызовы и возможности урегулирования карабахской проблемы в обзоре бурных военно-политических процессов, происходящих вокруг Арцаха в последнее время. В частности, в статье о продвижении «азербайджанских принципов» выдвигается точка зрения, что только Минская группа ОБСЕ получила законный мандат заниматься урегулированием карабахского конфликта от имени международного сообщества. Поэтому, несмотря на то, что из-за противоречий между Западом и Россией он вынужден ничего не делать, все же, выступая от имени международного сообщества в процессе карабахского урегулирования, следует в первую очередь рассматривать документы, решения и заявления, принятых этой самой структурой как легитимным органом. Это три принципа хельсинкского Заключительного акта и шесть элементов урегулирования конфликта.

В то же время анализ военно-политических и дипломатических шагов официального Баку показывает, что реальной целью идеи «азербайджанского мира» является окончательное закрепление завоеваний, достигнутых в результате войны, в соответствии с собственными устремлениями. В данном случае для Азербайджана важно, чтобы он имел статус международно-правового договора, заключенного между двумя суверенными государствами, с вытекающими из него необратимыми последствиями. Дело в том, что если в 1920-х гг. Арцах вошел в состав Азербайджанского государства благодаря давлению Кавказского бюро Коммунистической партии, и это обстоятельство позже дало арцахским армянам как правовые, так и моральные основания для борьбы за реализацию своих прав, после чего было подписано соглашение между два государства-члена ООН исключает такое право и возможность.

Поэтому, если руководство Армении, поддавшись давлению азербайджанской стороны, подпишет так называемое мирное соглашение в рамках выдвинутых последней предусловий или откажется от Арцаха, то арцахским армянам больше нечего будет делать чем всеми возможными способами стремиться к установлению таких отношений с Российской Федерацией, которые обеспечат безопасность Арцаха и возможность жить на своей родине. Альтернативой является депатриация арцахских армян. Кавказское бюро ЦК Коммунистической (трудовой) партии России.

Ключевые слова: Карабахский конфликт, международное сообщество, Минская группа ОБСЕ, три принципа, шесть элементов, пять предварительных условий, бакинская мирная повестка, Азербайджан, Армения, Арцах

Three principles, six elements and five preconditions. The perspective of settlement of the Karabakh problem in the context of establishment of "Azerbaijani peace"

Pashayan Hrayr A.

Lecturer at Artsakh State University and Mesrop Mashtots University,
Candidate of Political Science, Associate Professor (Stepanakert, Republic of Artsakh)
hrayr.pashayan@mail.ru

¹ Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ № scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

Abstract. The article analyzes the perspectives, challenges and opportunities of the settlement of the Karabakh problem in the overview of the rapid military and political processes taking place around Artsakh recently. In particular, the article on the promotion of "Azerbaijani principles" puts forward the point of view that only the OSCE Minsk Group has received a legal mandate to deal with the settlement of the Karabakh conflict on behalf of the international community. Therefore, regardless of the fact that due to the contradictions between the West and Russia, it is forced to do nothing, yet speaking on behalf of the international community in the Karabakh conflict settlement process, one should first of all consider the documents, decisions and statements adopted by this very structure as a legitimate body. They are the three principles of the Helsinki Final Act and the six elements of conflict settlement. At the same time, the analysis of military-political and diplomatic steps carried out by official Baku shows that the real goal of the idea of "Azerbaijani peace" is the final fixation of the gains made as a result of the war in accordance with one's own aspirations. In this case, it is important for Azerbaijan that it has the status of an international legal agreement concluded between two sovereign states, with irreversible consequences arising from it. The point is that if in the 1920s Artsakh became part of the Azerbaijani state due to the pressure of the Caucasian Bureau of the Communist Party, and this circumstance later gave the Artsakh Armenians both legal and moral grounds to fight for the realization of their own rights, then the agreement signed between the two UN member states excludes such a right and opportunity. Therefore, if the leadership of Armenia, succumbing to the pressure of the Azerbaijani side, signs the so-called peace agreement within the framework of the last preconditions put forward or renounces Artsakh, then the Armenians of Artsakh will have nothing more to do than to strive by all possible means to establish such relations with the Russian Federation that will ensure the security of Artsakh and the opportunity to live on my homeland. Alternative is the depatriation of Artsakh Armenians.

Keywords: Karabakh conflict, international community, OSCE Minsk Group, three principles, six elements, five preconditions, Baku peace agenda, Azerbaijan, Armenia, Artsakh

Վերջին շրջանում Արցախի շուրջ տեղի ունեցող սրընթաց ռազմաքաղաքական գործընթացներն ու իրարամերժ հայտարարությունները, վերստին հրատապ են դարձնում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հեռանկարների, մարտահրավերների ու հնարավորությունների վերլուծությունը: Ինչպես հայտնի է, ադրբեջանական կողմն օգտագործելով 2020 թվականի աշնանային պատերազմում ունեցած հաջողությունները, առիթը բաց չի թողնում ճնշում գործադրելով և հնարավորինս կարճ ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետության հետ այսպես կոչված խաղաղության պայմանագիր ստորագրելու համար: Արդեն 2020 թվականի նոյեմբերի 9/10-ին հաջորդած ամիսներին այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը սկսեց պարբերաբար հնչեցնել Ղարաբաղյան հակամարտության ավարտված լինելու, հետևաբար նաև նոր իրողությունների արձանագրմամբ Ադրբեջանի ու Հայաստանի միջև խաղաղության պայմանագիր ստորագրելու գաղափարը: Հստակեցնելով սեփական ձգտումները, 2022 թվականի մարտին՝ պաշտոնական Բաքուն Հայաստանի Հանրապետությանը փոխանցեց հինգ սկզբունքներից բաղկացած փաստաթուղթ [11], որն ադրբեջանական սպառնալիքների պայմաններում ձեռք բերեց ոչ այնքան սկզբունքների, որքան նախապայմանների կարգավիճակ [20]: Որոշակի ընդդիմանալուց հետո, Հայաստանի իշխանությունները ստիպված ընդունեցին նշված պահանջները, իսկ արդեն ապրիլի 13-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում, ՀՀ վարչապետը պաշտոնապես ներկայացրեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման իշխող թիմի տեսլականը,

շեշտելով որ «այսօր միջազգային հանրությունը՝ մեզ կրկին ասում է. մի փոքր իջեցրեք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ձեր նշածոդրը և միջազգային մեծ կոնսոլիդացիա կապահովեք Հայաստանի և Արցախի շուրջ: Հակառակ դեպքում, ասում է միջազգային հանրությունը, խնդրում ենք մեր վրա հույս չդնել, ոչ թե այն պատճառով, որ մենք չենք ուզում ձեզ օգնել, այլ այն պատճառով, որ մենք չենք կարող ձեզ օգնել» [7]:

ԵԱՀԿ Մինսկի խումբը և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքներն ու տարրերը: Արցախի հարցում իշխանությունների որդեգրած դիրքորոշումը բուն և հակասական արձագանք գտավ ինչպես

¹ Համաշխարհային հանրություն (միջազգային հանրություն) քաղաքական տերմին, որը հաճախ օգտագործվում է քաղաքագիտական աշխատություններում, պետական այրերի ելույթներում և լրատվամիջոցներում՝ աշխարհի պետությունների համակարգային փոխկապակցվածությունը մատնանշելու համար: Կախված համատեքստից, այն կարող է ցույց տալ երկրների տարբեր խմբեր՝ միավորված ըստ տնտեսական, քաղաքական և գաղափարական բնութագրերի: Երբեմն դա նշանակում է գործող միջազգային կազմակերպություններ, առաջին հերթին՝ ՄԱԿ-ը, որպես կազմակերպություն, որը միավորում է երկրագնդի գրեթե բոլոր երկրները: Հաճախ օգտագործվում է որպես հետադարձական հնարք, հակադրելու մեկ պետության քաղաքականությունը մի խումբ այլ պետությունների նկատմամբ, որոնք այս համատեքստում կոչվում են «համաշխարհային հանրություն» [34]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Ոմանց համար միջազգային հանրությունը պարզապես գոյություն չունի: Մյուսների համար տերմինը, որոշ չափով ավելի պրագմատիկ, վերաբերում է բոլոր երկրներին, երբ նրանք որոշում են համատեղ գործել: Կա մեկ այլ, ավելի ճշգրիտ սահմանում, որն ընդգրկում է միջազգային ազդեցություն ունեցող բոլոր երկրները. սա ցանկացած երկրի ծայն է, որի ինքնությունն ու ինքնիշխանությունը ճանաչված է, և որը որոշում է մասնակցել գլոբալ քննարկումներին և որոշումների կայացմանը [35]:

ընդհանրապես, այնպես էլ հասարակական լայն շրջանակներում: «Ադրբեջանական սկզբունքների» առաջնորդման համատեստում պաշտոնական Երևանի ցուցաբերած դիրքորոշմանն անդրադառնալով, անհրաժեշտ ենք համարում նշել, որ իրավական տեսանկյունից միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու օրինական մանդատ ստացել է միայն ԵԱՀԿ Մինսկի խումբը: Դեռևս 1992 թվականին Հելսինկիում կայացած նիստում, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհուրդը խնդրեց գործող նախագահին որքան հնարավոր է շուտ հրավիրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ խորհրդաժողով՝ Հայաստանի և Ադրբեջանի մասնակցությամբ: Այս միջոցառումը պետք է անցկացվեր Մինսկում և դառնար խաղաղ կարգավորման բանակցությունների հարթակ [30]: Արդեն 1994 թվականին ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթնաժողովում Մինսկի խումբը լիարժեքորեն գործելու հնարավորություն ստացավ: Գագաթնաժողովի որոշմանը համաձայն [31]՝ «1995 թվականի մարտի 23-ին Գործող նախագահը հանձնարարել է Մինսկի խմբի համանախագահներին համապատասխան հիմքեր ապահովել հակամարտությունը կարգավորելու համար», հատուկ ընդգծելով, որ «Մինսկի գործընթացը կարելի է հաջողությամբ ավարտված համարել, եթե այդ նպատակներն ամբողջությամբ իրականացվեն» [32]: Այսինքն՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում խոսելով միջազգային հանրության անունից, պետք է նկատի ունենալ հենց այս կառույցի՝ որպես լեգիտիմ մարմնի կողմից ընդունված փաստաթղթերը, որոշումներն ու հայտարարությունները: Այլապես յուրաքանչյուր պետություն, կազմակերպություն կամ քաղաքական գործիչ ըստ նպատակահարմարության կարող է հնչեցնել ամենատարբեր բնույթի հայտարարություններ ու վերին աստիճանի ճշմարտություններ, որոնք առնչություն չունեն հիմնախնդրի բուն էության հետ: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ որևէ երկիր, միջազգային կազմակերպություն կամ հարթակ այս կամ այն դրդապատճառով իրապես ցանկանում է իր ներդրումն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացում, ապա պետք է հիմք ընդունի ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից ընդունված սկզբունքներն ու տարերը, որոնց մշակման համար տարիներ են պահանջվել և որոնք ժամանակին ընդունվել են ինչպես միջազգային հանրության, այնպես էլ հակամարտող երկրների կողմից²:

Անցած տասնամյակների ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից՝ ի դեմս միջազգային հանրության անունից մանդատ ունեցող կառույցի, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մի քանի առաջարկություններ են ներկայացվել: Դրանցից մեկը և ըստ էության ամենավերջինը, որը որպես ապագա բանակցությունների հիմք ընդունվել է հակամարտող երկրների կողմից, հայտնի են Մադրիդյան սկզբունքներ անվամբ: Հանդիսանալով ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահողների՝ հակամարտող բոլոր կողմերի հետ երկարատև բանակցությունների ու հավասարակշռված գործունեության արգասիք, փաստաթղթում տեղ են գտել կարևորագույն այն սկզբունքներն ու տարրերը, որոնք ըստ միջազգային հանրությունը ներկայացնող կառույցի, անհրաժեշտ են էթնոքաղաքական այդ հակամարտությունը կարգավորելու համար:

Այսպես, 2009 թ. հուլիսի 10-ին, Իտալիայի Լ'Աբբիլիա քաղաքում ընթացող Մեծ ութնյակի գագաթնաժողովի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների առաջնորդները՝ ԱՄՆ նախագահ Օբաման, Ռուսաստանի նախագահ Մեդվեդևը և Ֆրանսիայի նախագահ Սարկոզին Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ընդունեցին հետևյալ համատեղ հայտարարությունը.

«Մենք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահներու, հաստատում ենք մեր հանձնարարությունը՝ աջակցելու Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքները վերջնական տեսքի բերելու գործընթացին:

Հանձնարարում ենք մեր միջնորդներին Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին ներկայացնել 2007 թվականի նոյեմբերի Մադրիդյան փաստաթղթի թարմացված տարբերակը, որը համանախագահների կողմից հիմնարար սկզբունքների վերջին ձևակերպումն է: Մենք կոչ ենք անում Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին լուծել իրենց միջև մնացած մի քանի տարաձայնությունները և վերջնական տեսքի բերել Հիմնարար սկզբունքների շուրջ այս համաձայնությունը, որը նախանշում է համապարփակ կարգավորումը» [27]:

Այնուհետև տեղեկագրի ձևով ներկայացվել է, որ «2007 թվականի նոյեմբերին Մադրիդում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախարարները Հայաստանին և Ադրբեջանին են ներկայացրել կարգավորման Հիմնական սկզբունքների

² Հարկ ենք համարում շեշտել, որ խոսքը տվյալ դեպքում ոչ թե Մինսկի խմբի մասին է, որը Արևմուտք-Ռուսաստան հարաբերություններով պայմանավորված մատնված է անգործության, այլև այդ կառույցի կողմից մշակված, հա-

կամարտող կողմերի ու միջազգային հանրությանը ներկայացված սկզբունքների ու տարրերի:

նախնական տարբերակը: Ըստ այդմ՝ հիմնական սկզբունքներն արտացոլում են ողջամիտ փոխզիջում, որը հիմնված է **«Երսիկյան եզրափակիչ ակտի երեք՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և հավասարության ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքների վրա:**

Հիմնական սկզբունքների հիման վրա Մինսկի խումբը կողմերին է ներկայացրել վեց կետից բաղկացած դրույթներ կամ ինչպես ընդունված է ասել տարրեր, որոնք մասնավորապես կոչ են անում.

1. Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը.

2. Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ, որը տալիս է անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ.

3. Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցք.

4. Լեռնային Ղարաբաղի սպազա իրավական կարգավիճակի վերջնական որոշում՝ իրավական պարտադիր կամքի արտահայտման միջոցով.

5. բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների իրենց սկզբնական բնակության վայրերը վերադարձնելու իրավունք. և

6. անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն:

Այս Հիմնական սկզբունքների հաստատումը Հայաստանի և Ադրբեջանի կողմից թույլ կտա համապարփակ կարգավորում՝ սպառնալիքի խաղաղություն, կայունություն և բարգավաճման սպազա Հայաստանի և Ադրբեջանի և ամբողջ տարածաշրջանի համար» [27]:

Հարկ է նշել, որ հակամարտության երեք կողմերի համար որպես հիմք ընդունված «Մադրիդյան սկզբունքները» որոշակի խմբագրումներով հանդերձ, տարիներ շարունակ եղել են բանակցային սեղանին: Այսպես 2007-ից 12 տարի անց՝ 2019 թվականին, բանակցային գործընթացի վերաբերյալ հակասական հայտարարություններին ի պատասխան ԵԱՀԿ Մինսկի խումբ տարածել է հետևյալ հայտարարությունը: «Մինսկի խմբի գործունեության բնույթի վերաբերյալ վերջերս արված հակասական հրապարակային հայտարարությունների առնչությամբ համանախագահները վերահաստատում են, որ արդար և տևական կարգավորումը պետք է հիմնվի **«Երսիկյան եզրափակիչ ակտի առանցքային սկզբունքների վրա, ներառյալ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը և ժողովուրդների իրավահասարակությունն ու ինքնորոշման իրավունքը:** Այն պետք է նաև ներառի լրացուցիչ տարրեր, որոնք 2009-2012 թվականներին առաջարկվել են համանախագահ երկրների նախագահների կողմից այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների

վերադարձը Ադրբեջանի վերահսկողության ներքո, Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակը՝ անվտանգության և ինքնակառավարման երաշխիքների սպառնալիք, Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ կապող միջանցքը, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի սպազա սահմանումը՝ իրավական ուժ ունեցող կամարտահայտության միջոցով, բոլոր տեղահանված անձանց և փախստականների վերադարձի իրավունքն իրենց բնակության նախկին վայրեր, անվտանգության միջազգային երաշխիքները, որոնք ներառելու են խաղաղապահ գործողություն» [26]:

Այն, որ Մադրիդյան փաստաթղթում առաջադրված դրույթները լիարժեքորեն չէին համապատասխանում հայկական կողմերի դիրքորոշմանը, բազմիցս է ասվել [1]: Բայց հենց այդպիսին է եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ ի դեմս միջազգային հանրության, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսլականը: Իհարկե, 2020 թվականի պատերազմից հետո, ինչպես ասում են շատ ջրեր են հոսել: Մակայն տարածաշրջանի բոլոր բնակիչների ձգտումներն արտահայտող և կողմերին լավ հայտնի սկզբունքների հիման վրա հիմնախնդրի վերջնական համապարփակ և կայուն կարգավորման ձեռքբերմանը հասնելը չի կորցրել արդիակալությունը: Այդ մասին է 2021 թվականի ապրիլի 13-ի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հերթական հայտարարությունը [28]: Իսկ կողմերին լավ հայտնի սկզբունքները դրանք «Մադրիդյան սկզբունքներն» են, որի շրջանակներում, ինչպես արդեն նշվել է, քննարկման ենթակա են բոլոր համալիր խնդիրները, այդ թվում նաև կարգավիճակի:

«Ադրբեջանական սկզբունքներն» ու դրանց իրական նպատակը: 2020 թվականի աշնանային պատերազմում ունեցած ձեռքբերումներից, 90-ականներին կրած սեփական պարտության և հայկական կողմի թույլ տված սխալներից դասեր քաղելով, ադրբեջանական կողմը նոյեմբերյան հրադադարին անմիջականորեն հաջորդող օրերից ձգտում է օգտվել ստեղծված նպաստավոր հանգամանքներից՝ փորձելով օրինականացնել ունեցած ձեռքբերումները և նոր զիջումներ պարտադրել Հայաստանին: Վերլուծաբանների կարծիքով՝ Բաքուն մտավախություն ունի, որ ռազմական հաղթանակից հետո Լեռնային Ղարաբաղի վրա լիակատար հսկողության վերականգնումը կարող է տարիներ ձգվել [19]: Ուստի իր նպատակին հասնելու համար երկրի ղեկավարությունը ամենատարբեր առիթներով հանդես է գալիս խաղաղության հաստատման սեփական օրակարգն ընդունելու Հայաստանին ուղղված

պահանջներով³: Խտացված տեսքով այդ մոտեցումը նախագահ Իլհամ Ալիևը հերթական անգամ ներկայացրեց 2022 թ. առաջին կիսամյակի արդյունքների վերաբերյալ խորհրդակցության ժամանակ [23]: Դատելով ԱՀ նախագահի և երկրի պաշտոնյաների հայտարարություններից, 2021 թվականին ադրբեջանական կողմը տարբեր խողովակներով Հայաստանին առաջարկություններ կամ պահանջներ է փոխանցել, որոնք վերջնականապես ամբողջացվել և հայկական կողմին են ներկայացվել հինգ «ադրբեջանական սկզբունքների» տեսքով:

Այսպես՝ 2022 թ. մարտի 11-ին Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը Anadolu պարբերականին տված հարցազրույցում հայտարարել է, որ Բաքուն Երևանին է ուղարկել հարաբերությունների կարգավորման վերաբերյալ 5 կետից բաղկացած փաստաթուղթ և սպասում է պատասխանի [12]: Բայրամովի խոսքով՝ արդեն շուրջ մեկ տարի է, ինչ Հայաստանը որևէ պատասխան չի տալիս Ադրբեջանի առաջարկին: «Ադրբեջանը վերջերս նոր առաջարկ է ուղարկել Հայաստանին, որպեսզի ցույց տա իր բարի կամքը: Մենք Հայաստանին առաջարկել ենք մի քանի հիմնարար սկզբունքներ, որոնք ներառում են Ադրբեջանի և Հայաստանի հարաբերությունների կարգավորում: Մենք ասել ենք, որ պատրաստ ենք հարաբերությունները զարգացնել որոշ սկզբունքների հիման վրա: Հայաստանը պետք է դիտարկի այդ հարցերն ու պատասխան տա: Եթե Հայաստանը ցանկանում է հարաբերությունների կարգավորում, սպա սա հիանալի հնարավորություն է նրա համար: Առաջիկայում հայտնի կլինի Հայաստանի պատասխանը, և բնականաբար, մենք կձեռնարկենք համապատասխան քայլեր», - թուրքական պարբերականին ասել է Բայրամովը [12]:

Ըստ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի խոսնակ Լեյլա Աբդուլլահյանի հրապարակման՝ փաստաթուղթն արտացոլում է երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման հետևյալ հինգ հիմնական սկզբունքները.

- ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, միջազգային սահմանների անձեռնմխելիության և միմյանց քաղաքական անկախության փոխադարձ ճանաչում.

- պետությունների միմյանց նկատմամբ տարածքային պահանջների բացակայության և ապագայում նման պահանջներ չներկայացնելու

իրավական պարտավորության փոխադարձ հաստատում.

- ձեռնպահ մնալ միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգությանը սպառնալուց, քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության դեմ սպառնալիքներ և ուժ կիրառելուց, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին անհամատեղելի այլ հանգամանքներից.

- պետական սահմանի սահմանազատում և սահմանազատում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում.

- տրանսպորտի և կապի բացում, այլ համապատասխան հաղորդակցությունների հաստատում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցություն» [21]:

Արձագանքելով ադրբեջանական կողմին, ՀՀ ԱԳ նախարարն ընդգծեց, որ խաղաղության պայմանագրի շուրջ յուրաքանչյուր բանակցություն պիտի ընթանա առանց նախապայմանների: «Հարկ է նկատել նաև, որ առաջարկում նշված կետերն ամբողջությամբ չեն արտացոլում առկա խնդիրների ողջ օրակարգը: Հայկական կողմի համար սկզբունքային և հիմնարար է, որ հատակ երաշխավորվեն արցախահայության իրավունքները և ազատությունները, վերջնականապես հստակեցվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Մեզ համար ԼՂ հիմնախնդիրը տարածքային հարց չէ, այլ իրավունքների: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հայկական կողմը պատասխանել է ադրբեջանական առաջարկին՝ համահունչ նշված դիրքորոշմանը» [4]: Հայկական կողմի պատասխան առաջարկները մեկնաբանելով, Ադրբեջանի ԱԳ նախարարն այն ըստ էության անընդունելի համարեց [22] (հարկ է նշել, որ պաշտոնական Երևանի՝ Բաքվին ներկայացրած կետերը [3] ոչ առանց հիմքերի ծաղրի [5] ու քննադատության առարկա դարձան նաև հայ հասարակական քաղաքական շրջանակներում [9]): Դիվանագիտական ճանապարհով չստանալով Հայաստանի համաձայնությունը, մարտի 24-ին ադրբեջանական կողմը ձեռնամուխ եղավ ուժային եղանակով առաջադրված խնդրի լուծմանը՝ բացահայտ ռազմական ագրեսիա ձեռնարկելով Արցախի արևելյան հատվածում [18]: Արդյունքում՝ կարճ ժամանակ անց հայկական կողմն ընդունեց ադրբեջանական «առաջարկները» [15]: Արդեն ապրիլի 13-ին Ազգային ժողովում ունեցած ելույթում ՀՀ վարչապետը ներկայացրեց հիշատակված՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսլականը, որի հիմնական շեշտադրումը կապված էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի նշաձողի իջեցման հետ [7]: Այս հանգամանքը հերթական անգամ մատնանշում է հիմնախնդրի՝ միջազգայնորեն ճանաչված սկզբունքների և ԵԱՀԿ

³ Օրինակ, 2021 թվականի դեկտեմբերի 6-ին Ղուբայի շրջանի Ղոնախքենդ գյուղի բնակիչների հետ հանդիպման ընթացքում Իլհամ Ալիևը հանդես էր եկել Ադրբեջանի պայմաններն ընդունելու և այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» բացման կոնկրետ ժամկետ հայտարարելու՝ Հայաստանին ուղղված պահանջներով, տես՝ [13]

Մինակի խմբի կողմից առաջ քաշված տարերի հիման վրա կարգավորելու կարևորությունը⁴: Իհարկե սրան կարելի է հեշտությամբ հակադարձել հայտնի՝ իրավիճակ է փոխվել արտահայտությամբ, որի իմաստն այն է, որ Ադրբեջանը հաղթողի՝ ուժի դիրքերից հանդես գալով պարտադրում է այն ամենը, ինչն իրեն է ձեռնտու, հակառակ դեպքում հանդես է գալիս նոր սպառնալիքներով: Այս տրամաբանությունից ելնելով մենք պետք է բավարարենք Ադրբեջանի բոլոր պահանջներն ու ցանկությունները, որոնք, ինչպես ախորժակի դեպքում, ուտելիս է բացվում:

Պետք է ասել, որ իրենց խոսքում անընդունելի համարելով հարաբերությունների կարգավորման գործընթացում նախապայմանները, որի հիմքով ժամանակին մերժվել էր Հայաստանի կողմից առաջ քաշված սահմանազատման և սահմանազոմման մասին առաջարկությունները [24], ադրբեջանական կողմը տարբեր առիթներով հայտարարում է, թե Բաքուն պատրաստ է խաղաղության պայմանագրի շուրջ Երևանի հետ բանակցությունների՝ այն պայմանով, որ Հայաստանը կընդունի իր կողմից առաջ քաշված «հինգ հիմնարար սկզբունքները» [15]:

Դրան զուգահեռ ադրբեջանական կողմը պարբերաբար նոր նախապայմաններ է առաջ քաշում՝ սպառնալով համապատասխան ռազմական քայլեր ձեռնարկել [16]: Այն, որ պաշտոնական Բաքվի առաջարկները 2020 թվականի պատերազմից հետո միայն սպառնալիքների ձևով է հնչում, որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ: Մակայն պարզվում է, որ առաջ քաշված նախապայմանները հայկական կողմին պարտադրելու համար ադրբեջանական կողմը սպառնալիքների լեզվից անցել է նաև գործնական քայլերի՝ ակնառու դարձնելով դիվանագիտական ջանքերը ուժի գործոնով լրացնելու ձգտումը [19]: Այս ամենն ակնհայտ է դառնում ադրբեջանական պահանջների ներկայացման ժամանակահատվածի և Արցախում կամ ՀՀ տարբեր հատվածներում ձեռնարկված մարտական գործողությունների հերթական սրացումների պարզագույն համադրմամբ:

⁴ Մեր համոզմամբ, նախ՝ օրինական և հիմնավոր պետք է համարել Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ հիմնախնդրի լուծման համար ներկայացրած սկզբունքներն ու տարրերը: Բացի դրանից, հաշվի առնելով փաստաթղթերն ու համատեղ հայտարարությունները կամայականորեն մեկնաբանելու ադրբեջանական կողմի գործելաոճը, ինչպես օրինակ 2020 թվականի նոյեմբերյան եռակողմ հայտարարության՝ Արցախը Հայաստանին կապող միջանցքի դեպքում, անիմաստ ենք համարում նշված սկզբունքների մեկնաբանությունը, մասնավոր , որ դրանք ակնհայտորեն մեկ նպատակ ունեն՝ օրինականացնել Ադրբեջանի ձեռքբերումներն ու պահանջները:

Ո՛րն է իրականում ադրբեջանական կողմի բուն նպատակը: Ակնհայտ է, որ պաշտոնական Բաքվի համար ձեռնտու է անտեսել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարիներով մշակված և հավասարակշռված Մադրիդյան սկզբունքները: Այդ սկզբունքներից հրաժարումն ու ԵԱՀԿ Մինսկի խմբից հիմնախնդրի կարգավորման գործընթացը այլ հարթակներ տեղափոխելը, որի ուղղությամբ ժամանակին ադրբեջանական կողմը բազմաթիվ նախաձեռնություններ է հանդես բերել⁵, հնարավորություն է տալիս հետպատերազմական իրողությունների հաշվառումով, ճնշումներ գործադրել պաշտոնական Երևանի վրա, սեփական սկզբունքներով խաղաղության դարաշրջան բացելու համար: Այսինքն՝ միջազգային ընդունված ձևաչափի փոփոխությունը և 3+3 բազմակողմ, առավել ևս Հայաստան-Ադրբեջան երկկողմ բանակցությունները որևիցե ձևով չեն բխում հայկական կողմերի շահերից⁶: Բանն այն է, որ նման ձևաչափերում ադրբեջանն ու Թուրքիան այլևս կաշկանդված չեն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը ճանաչելու պարտադրանքից, որն ամրագրված էր մադրիդյան սկզբունքներում կամ դրան հաջորդած կազանյան փաստաթղթում: Բացի դրանից, ինչպես ցույց են տալիս Թուրքիայից ու Ադրբեջանից հնչող հայտարարությունները [33], հարաբերությունները կարգավորելուն ուղղված հանդիպման նախապայմաններն [29] ու պատմության դառը փորձը, սեպարատ բանակցություններում նրանք կաշկանդված չեն լինի ցանկացած պահանջ Հայաստանին պարտադրելուց: Օգտվելով ռուս-ուկրաինական առնակատման հետևանքով առաջացած իրողություններից, ասել է թե Ռուսաստանի շուրջ ստեղծված կացությունից, ադրբեջանական կողմն արդեն սկսել է նաև բացահայտորեն անտեսել 2020 թ. նոյեմբերի 9/10 եռակողմ հայտարարության դրույթները, ինչի մասին են վկայում ինչպես Փառուխի, այնպես էլ Լաչինի միջանցքի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները [25]: Տարածքային նոր նվաճումներով, բարձունքների գրավմամբ և Արցախի մնացյալ հատվածի շուրջ օղակի սեղմամբ, Ադրբեջանի Հանրապետությունը որպես առաջնային նպատակ փորձում է ստեղծել մի այնպիսի իրավիճակ, որի պայմաններում կկանխվի արցա-

⁵ Տես՝ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 2008 թ. մարտի 14-ին ընդունած A/RES/62/243 բանաձևը կամ [8]

⁶ Ակնհայտ է, որ ադրբեջանական կողմը երկկողմ հանդիպումների դեպքում իրեն ավելի ազատ է զգալու ինչպես հայկական կողմի վրա ճնշումներ կատարելու, այնպես էլ նոր զիջումներ պահանջելու համար: Դրա հերթական վկայությունը դարձավ հուլիսի 16-ին Թբիլիսում տեղի ունեցած Միբրդյան-Բայրամով երկկողմ հանդիպումը, որին հաջորդեցին հանդիպման վերաբերյալ հակադիր մեկնաբանություններն ու օգոստոսյան սրացումները:

խահայության հետագա պայքարի բոլոր հնարավորությունները [2]:

Բացի դրանից, դատելով պաշտոնական Բաքվի Հայաստանի (<<+ԼՂ<>) նկատմամբ իրականացվող ռազմաքաղաքական քայլերի հաջորդականությունից, Ադրբեջանի Հանրապետության անթաքույց ռազմավարական նպատակը, բացի Արցախից նաև Մյունխի մարզի, Տավուշի ու Գեղարքունիքի մարզերի որոշ մասերի գրավումն է: Դրան հասնելու համար երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունն անթաքույց օգտագործում է ռազմական ճնշման մարտավարությունը [10]: Դրա էությունը կայանում է նրանում, որ պաշտոնական Բաքուն նախ հայտարարում է իր այս կամ այն ցանկության մասին, ժամանակ տալիս հայկական կողմին և այն կամովին չկատարելու դեպքում ռազմական ճանապարհով լուծում խնդիրները: Հայկական կողմն էլ որոշակի դիմադրություն ցույց տալուց հետո լայնածավալ ռազմական գործողությունների սպառնալիքի ներքո ստիպված բավարարում է հերթական ցանկությունը: Օրինակները բազում են՝ Խժաբերդ ու Հին Թաղեր (2020 թ. դեկտեմբեր), Փառուխ և Զարագուխ (2021 թ. մարտ), Բերձոր ու մյուս մարտավարական կարևորության բարձունքներ (2022 թ. օգոստոս):

Այս համատեքստում՝ պաշտոնական Երևանից ստացվող արձագանքները հիմք են տալիս ենթադրելու, որ առայժմ երկրի իշխանությունները որդեգրել են ադրբեջանական կողմի պահանջներն աստիճանաբար բավարարելու մարտավարությունը [6]: Դրա նպատակն, ըստ երևույթին, մի կողմից Ադրբեջանի հետ ուղղակի լայնածավալ բախումից խուսափելն է, մյուս կողմից՝ ժամանակ ձգել ավելի նպաստավոր պայմանների համար: Որքան կշարունակվի այս ամենը դժվար է կանխատեսել: Սակայն ակնհայտ է, որ այսօր ժամանակն ամենևին էլ մեր օգտին չի աշխատում: Հաշվի առնելով ադրբեջանական լրատվամիջոցներում վերջին շրջանում ռուսական խաղաղապահների դեմ ծավալված արշավը, կարելի է ենթադրել, որ ադրբեջանական նպատակների իրականացմանն Արցախում խոչընդոտ են հանդիսանում ոչ այնքան ՀՀ-ն, որքան ռուսական խաղաղապահները: Հետևաբար պետք է ենթադրել, որ առաջիկայում ադրբեջանական կողմի թիրախներից մեկն էլ Պաշտպանության բանակի հետ մեկտեղ հանդիսանալու է նաև ռուսական խաղաղապահ զորակազմը, եթե իհարկե վերջինս չկատարի Ադրբեջանի առաջ քաշած բոլոր պահանջները:

Այսպիսով, ադրբեջանական կողմի խաղաղություն հաստատելուն ուղղված ռազմաքաղաքական ու դիվանագիտական ձգտումների վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ դրա

իրական նպատակը ոչ թե խաղաղությունն է, այլև պատերազմի հետևանքով սեփական ձեռքբերումների և նպատակների վերջնական ամրագրումը: Տվյալ պարագայում Ադրբեջանի համար կարևոր է, որ այն ունենա երկու ինքնիշխան պետությունների միջև կնքված միջազգային-իրավական պայմանագրի կարգավիճակ՝ դրանից բխող անդառնալի հետևանքներով: Բանն այն է, որ եթե օրինակ 1920-ական թթ. Կովբյուրոյի ճնշմամբ է Արցախը հայտնվել ադրբեջանական պետության կազմում և այդ հանգամանքը հետագայում և իրավական, և բարոյական հիմքեր է տվել արցախահայությանը պայքարելու սեփական իրավունքների իրացման համար, և դա հասկանալի ու ընդունելի էր ողջ քաղաքակիրթ մարդկությանը, ապա ՄԱԿ-ի անդամ երկու պետությունների միջև կնքված պայմանագիրը այլևս բացառում է նման իրավունքն ու հնարավորությունը: Հետևաբար, եթե Հայաստանի ղեկավարությունը անսալով ադրբեջանական կողմի ճնշումներին, վերջինիս առաջ քաշված նախապայմանների շրջանակներում ստորագրի խաղաղության պայմանագիր կոչվածը [17], ասել է թե հրաժարվի Արցախից, ապա արցախահայությանը այլ բան չի մնա անելու քան բոլոր հնարավոր միջոցներով ձգտելու հասնել Ռուսաստանի Դաշնության հետ այնպիսի հարաբերությունների հաստատմանը, որը կապահովի Արցախի անվտանգությունն ու սեփական հայրենիքում ապրելու հնարավորությունը: Այլընտրանքը՝ արցախահայության հայրենագրվումն է:

Նման պայմաններում ավելի է կարևորվում հիմնախնդրի կարգավորման սեփական տեսլականն ունենալու և այդ ուղղությամբ փոքր քայլերով առաջ շարժվելու միասնական դիրքորոշումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Փաշայան Հ.**, Զաղաքական փաստարկները Արարաթյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, մաս առաջին, Մտեփանակերտ, 2016, 34-36 էջեր:
2. Ադրբեջանը տեղաշարժերի միջոցով փորձում է կանխել զինված դիմակայության, պայքարի հնարավորությունները. Տիգրան Աբրահամյան, 12 օգոստոսի 2022 թ., <https://news.am/arm/news/715790.html>
3. Էդմոն Մարությանը հրապարակել է խաղաղության պայմանագրի վերաբերյալ Ադրբեջանին Հայաստանի ներկայացրած 6 կետերը <https://news.am/arm/news/701749.html>
4. ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հարցազրույցը «Արմենպրես» լրատվական գործակալությանը. 15 մարտի, 2022, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/03/15/Interview_Armenpress/1135

5. Հայաստանի իշխանությունների վեց առաջարկները Ադրբեջանին բացարձակ խայտառակություն են. Աշոտյան <https://news.am/arm/news/701848.html>
6. «Հրապարակ». Երևանի ջանասիրությունը՝ շուտափույթ և արագ գեղե իր վրայից Ղարաբաղի համար պատասխանատվությունը, տեսանկյունի է ամբողջ աշխարհին, <https://hraparok.am/post/30ddc4abc9a5f580be67a513eed72e1b>
7. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը Ազգային ժողովում՝ Կառավարության ծրագրի 2021 թվականի կատարողականի զեկույցի քննարկմանը, <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2022/04/13/Nikol-Pashinyan-Speech/>
8. Փաշայան Հ., Բալայան Լ., Ռոբերտ Ուլոյերի հսկահայկական զեկույցը. Հայացք Արցախից, http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=14554
9. 6 կետ առ ոչինչ. Լևոն Չուրարյան <https://www.aniarc.am/2022/05/15/levon-zurabyan-6-points-edmon-marukyan/>
10. Азербайджанская армия провела операцию «Месть» - <https://mod.gov.az/az/news/azerbaycan-ordusu-qisas-emeliyyati-kecirib-video-41224.html>
11. Азербайджан обнародовал предложения о мире, представленные Армении, <https://insanoid.com/azerbaycan-erm-nistana-s-lh-n-t-qdim-edil-n-t-klifl-ri-a-qalay-b/>
12. Азербайджан представил Армении новое предложение из 5 пунктов по нормализации отношений, <https://www.aa.com.tr/tr/azerbaycan-cephe-hatti/azerbaycan-iliskilerin-normallesmesi-icin-ermenistana-5-maddelik-yeni-teklif-sundu/2532454>
13. Баку ставит Еревану “ультиматум”. <https://aze.az/baku-stavit-erevanu-ultimatum-video.html>
14. Глава МИД Азербайджана заявил, что Армения считает приемлемыми пять базовых принципов, <https://apa.az/ru/vneshnyaya-politika/glava-mid-azerbaidzana-zayavil-cto-armeniya-scitaet-priemlemymi-pyat-bazovyx-principov-477513>
15. Главы МИД Азербайджана и Турции обсудили по телефону текущую ситуацию в регионе <https://sng.today/baku/22360-glavy-mid-azerbajdzhana-i-turcii-obsudili-po-telefonu-tekuschuju-situaciju-v-regione.html>
16. Ильхам Алиев об операции «Возмездие» в Карабахе, 12 августа 2022 г., <https://haqqin.az/news/256650>
17. Ильхам Алиев: О каком статусе «Нагорного Карабаха» может идти речь, если мы определяем границы с Арменией?, <https://haqqin.az/news/247838>
18. Информационный бюллетень Министерства обороны Российской Федерации о деятельности российского миротворческого контингента в зоне нагорно-карабахского конфликта (на 26 марта 2022 г.) https://mil.ru/russian_peacekeeping_forces/bulletins/more.htm?id=12414883@egNews,
19. Карабахский маятник: почему Баку потребовал «демилитаризации» непризнанной республики, <https://www.forbes.ru/mneniya/473547-karabahskij-maatnik-pocemu-baku-potreboval-demilitarizacii-nepriznannoj-respubliki>
20. МИД Азербайджана: Баку готов заключить мирное соглашение с Ереваном, если Армения примет 5 основных принципов, <http://interfax.az/view/861753/az>
21. МИД Азербайджана раскрыл пункты своего предложения Армении. <https://minval.az/news/124232025>
22. Министр прокомментировал предложение Армении начать переговоры по пакету «5+6», https://apa.az/ru/vneshnyaya-politika/ministr-prokommentiroval-predlozenie-armenii-nacat-peregovory-po-paketu-56-480579?fbclid=IwAR3AVpkpo_Ul6MqsWSVHdhE
23. Под председательством Ильхама Алиева состоялось совещание, посвященное итогам шести месяцев этого года, 15 июля 2022, <https://president.az/ru/articles/view/56665>
24. No:0016/22, Information of the Press Service Department of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan on the meeting of Minister Jeyhun Bayramov with OSCE Secretary General Helga Schmid, <https://www.mfa.gov.az/en/news/no001622>
25. No:356/22, Commentary of the Press Service Department of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan on the statement of the Ministry of Foreign Affairs of Armenia dated August 3, 2022, <https://www.mfa.gov.az/en/news/no35622>
26. Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Upcoming Meeting of President Aliyev and Prime Minister Pashinyan, Moscow, Paris, Washington, 9 March 2019, www.osce.org/minskgroup/413813
27. Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries L'AQUILA 10 July 2009, <https://www.osce.org/mg/51152>
28. Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/PARIS/WASHINGTON 13 April 2021, <https://www.osce.org/minsk-group/483416>
29. Turkey ready to move Armenia normalisation talks to Yerevan and Ankara, <https://www.middleeasteye.net/news/turkey-armenia-normalisation-talks-ankara-ready?fbclid=IwAR1AHFtHdNbNVpK68hW070DjC2FGkDkHoL0mvQT1BpFrYAAw1YaiCavA00>
30. <https://www.osce.org/minsk-group/108306>
31. <https://www.osce.org/files/f/documents/b/a/39558.pdf>
32. <https://www.osce.org/minsk-group/108308>
33. Türkiye Ermenistan ilişkileri: Görüşmelerde yeni perde açılıyor (Թուրքիա-Հայաստան հարաբերություններ. բանակցություններում նոր վարագույր է բացվում) <https://www.milliyet.com.tr/siyaset/turkiye-ermenistan-iliskileri-gorusmelerde-yeni-perde-aciliyor-6805864>
34. <https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1031082>
35. **Michel Rocard.** Что такое мировое сообщество? <https://www.project-syndicate.org/commentary/defining-the-international-community-s-role-and-responsibility-by-michel-rocard/russian?barrier=accesspay>

Տճանաշարվել է՝ 21.08.2022

Րեցենզրվել է՝ 22.09.2022

Մոտրվել է՝ 26.09.2022